ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՇԻՐԱԿԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԾՐԱԳԻՐ ԵՎ ԹԵԶԻՍՆԵՐ

ՉԱՐԵՆՑԸ ԵՎ ԳՅՈՒՄՐԻՆ

Միջազգային գիտաժողով նվիրված

Եղիշե Չարենցի 125-ամյակին

09 սեպտեմբերի 2022թ.

Գյումրի

2022

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԲԱՑՈՒՄ

09-ը սեպտեմբերի, 2022թ. ժ. 10^{30}-ին

Մարզային գրադարանի դահլիճ

Բացման և ողջույնի խոսքեր՝

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ – ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի տնօրեն

ԳԵՎՈՐԳ ԱՄԻՐՅԱՆ - Մարզային գրադարանի տնօրեն

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐ

ԳԱՍՊԱՐՅԱՆ Դավիթ (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ԳԼԽԱՎՈՐ ՍԱՆԸ՝ ԳՅՈՒՄՐԵՅԻ ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ: «ՀՈԿՏԵՄԲԵՐ» (ԳՅՈՒՄՐԻ) ԵՎ «ՆՈՅԵՄԲԵՐ» (ԵՐԵՎԱՆ) ԳՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ԴԵՐԱՆՑ Մարգարիտ (ԱՄՆ)
ԱՄՆ-ի ՀԳՄ վարչության քարտուղար, արձակագիր
ՄԻՍՏԻԿ ԼԻՐԻԿԱ

ԹԱՍԱԼՅԱՆ Անուշ (Հայաստան)
Եղիշե Չարենցի տուն-թանգարան
Ե. ՉԱՐԵՆՑ «ԿԱՊԿԱՋ ԹԱՍԱՇԱ»

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Կարինե (Հայաստան)

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղ

«ՆՅՈՒԹԵՐ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ԿԱԶՄԱԾ ԴԱՍԱԳՐՔԵՐԻՑ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՄԱՍԻՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Անդրանիկ (Հայաստան)

Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային բաժանմունք

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ-ԳԱՐՍԻԱ ԼՈՐԿԱ. ԱՆՀԱՏԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԵՎ ԱՆԱՆՁՆԱԿԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴՐԱՄԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ռոզա (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻՆ՝ ԻՐ ՉԱՐԵՆՑԸ

ՄԱՏԻԿՅԱՆ Հասմիկ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ՕՐՈՐ **ԲԱՌԱՆՎԱՆ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ Ե. ՉԱՐԵՆՑԻ ԲԱՆԱՐՎԵՍՏՈՒՄ**

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԹԵԶԻՍՆԵՐ

ԳԱՍՊԱՐՅԱՆ Դավիթ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Հայաստան)
Էլ.փոստ՝ grakanagetgasparyan@mail.ru

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ԳԼԽԱՎՈՐ ՍԱՆԸ՝ ԳՅՈՒՄՐԵՅԻ ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ: «ՀՈԿՏԵՄԲԵՐ» (ԳՅՈՒՄՐԻ) ԵՎ «ՆՈՅԵՄԲԵՐ» (ԵՐԵՎԱՆ) ԳՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայացվելու են 1920-1930-ական թթ. գրական կյանքը Գյումրիում և Երևանում, Արմենի եռանդուն գործունեությունը Չարենցի կողքին, Արմենի երկու բացառիկ նշանակություն ունեցող հոդվածները՝ «Ինչպես են գրվում վեպերը», «Չարենցի և հարակից խնդիրների մասին»:

1920-1930-ական թթ. Չարենցը բացում էր նորագույն գրականության ճանապարհը: Դա հեշտ չէր. նրա դիմաց Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիան էր, որ գրականության կուսակցականացման ճանապարհով ձգտում էր առաջատար դիրքի՝ հեգեմոնիայի: Չարենցը և համախոհները՝ Արմեն, Մահարի, Բակունց և մյուսները, մերկապարանոց սխեմատիզմին հակադրում էին կենսական բարձր գրականությունը: Այդ ճանապարհին բացառիկ կարևոր նշանակություն ունեն Արմենի վերոհիշյալ երկու հոդվածները և այլ նյութեր, որոնք առանցքային դեր ունեցան ժամանակի գեղարվեստական գրականության ձևավորման ճանապարհին: Այդ հոդվածների տեսական դրույթներով

գրվեցին Արմենի «Երևան» վեպը, «Հեղնար աղբյուր» վիպակը և բազմաթիվ այլ գործեր: Այդ հոդվածները նաև որպես մեղադրանք ուղղվեցին նրանց դեմ, որոնց հետևեցին հալածանքները՝ Չարենցը մեռավ բանտում, Բակունցին գնդակահարեցին, Մահարուն և Արմենին աքսորեցին:

ԹԱՍԱԼՅԱՆ Անուշ
Եղիշե Չարենցի տուն-թանգարան (Հայաստան)
Էլ.փոստ՝ anush.tasalyan@gmail.com

Ե. ՉԱՐԵՆՑ «ԿԱՊԿԱԶ ԹԱՄԱՇԱ»

Զեկույցի նպատակն է ներկայացնել Եղիշե Չարենցին բնորոշ ևս մեկ նորարարության՝ հայ թատրոնի նորոգման աշխատանքը «Կապկազ թամաշա»-յի միջոցով: Թատրոնի ռեպերտուար ներմուծել բանաստեղծի, անհատի, ժամանակի հոգսերով ապրող մարդու մտահոգությունն իր ժամանակաշրջանի քաղաքական կյանքի նկատմամբ, իրական անցուդարձը գրականությամբ արտահայտել՝ ստեղծագործության միջոցով: Անդրադառնալ բանաստեղծի ձգտումներին՝ արդիականություն, նորարարություն և կարևորություն թե՛ հայ գրականության, թե՛ հայ նոր թատրոնի ստեղծման գործում: Ներկայացնել այն, որ հեղինակը քաղաքական սատիրայի նյութ է դարձրել Անդրկովկասյան Սեյմի ստեղծման և փլուզման պատմությունը, իր ստեղծագործության մեջ ներառել իրական կերպարներ՝ իրական անվանումներով ու կոչումներով:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Կարինե
Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի
Գյումրու մասնաճյուղ (Հայաստան)
Էլ. փոստ՝ literat.karine@gmail.com

«ՆՅՈՒԹԵՐ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ԿԱԶՄԱԾ ԴԱՍԱԳՐՔԵՐԻՑ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՄԱՍԻՆ

1991թ.՝ Անահիտ Չարենցի և Գրիգոր Հակոբյանի աշխատասիրությամբ, Երևանում լույս է տեսել «Նյութեր Ե. Չարենցի կազմած դասագրքերից» ժողովածուն: Այն Ե. Չարենցի դասագրքային ներդրումների ամբողջությունն է:

Դասագրքերը լայն առումով ճիշտ կազմելը բոլոր ժամանակների համար անչափ կարևոր և արդիական է, այդպես նաև մեր օրերում:

1928-1933 թթ. Ե. Չարենցը հրատարակել է 14 անուն դասագիրք և ուսումնական ձեռնարկ: Ընդ որում՝ առաջին դասագիրքը կոչվել է «Գրականության դասընթաց», ապա հաջորդիվ՝ «Գրականության և լեզվի դասընթաց», «Դասագիրք լեզվի և գրականության» և այլն:

Զեկուցման մեջ խոսելու ենք վերոհիշյալ ժողովածուում զետեղված դասագրքերի, նրանց ներառած բազմաբովանդակ նյութերի համադրության, ինչպես նաև գեղարվեստական առումով կարևորության մասին:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Անդրանիկ
Հայաստանի գրողների միության Շիրակի
մարզային բաժանմունք (Հայաստան)
էլ. փոստ՝ a.karapetyan7@mail.ru

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ-ԳԱՐՍԻԱ ԼՈՐԿԱ. ԱՆՀԱՏԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԵՎ ԱՆԱՆՁՆԱԿԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴՐԱՄԱՆ

Զեկուցման մեջ վերլուծվում է XX դարի երկու հանճարեղ գրողների՝ Ե. Չարենցի և Գ. Լորկայի ստեղծագործությունների և ճակատագրերի ողբերգական նմանությունը:Առաջին անգամ համեմատական վերլուծության են ենթարկվում նրանց կենսագրական տվյալները, թեմատիկ, պատկերային համակարգի առանձին դրսևորումներ:

Սույն ուսումնասիրությունը նպատակ ունի երկու գրողների օրինակով ցույց տալ հասարակական-քաղաքական իրադարձությունների ազդեցությունը անհատի վրա և արվեստագետի որոնումների ուղին ճգնաժամային պատմաշրջանում, որի արդյունքում նա ստիպված էր վերաիմաստավորել կոնցեպտուալ և գեղագիտական արժեքները:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ռոզա
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների
կենտրոն (Հայաստան)
էլ. փոստ՝ vard-rosa@mail.ru

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻՆ՝ ԻՐ ՉԱՐԵՆՑԸ

Գեղարվեստական խոհագրության ժանրով փորձել ենք ուրվագծել Եղիշե Չարենցի գրական դիմանկարը, նրա պոետական համակարգի ընդհանուր նկարագիրը, քանի որ պատմության քառուղիներում նրան էր վիճակված ստեղծել հայ ժողովրդի քաղաքական ողբերգության, մեր իրականության ամենադրամատիկ ու ամենալարված համապատկերը՝ այս ամենին նայելով ազգային բախտի փիլիսոփայության, նաև ազգային հպարտության ոսպնյակով։

Սրանով հանդերձ՝ Չարենց հեղափոխական բանաստեղծն ու ապագայապաշտ գեղագետն արմատապես փոխել է հայ բանաստեղծության ընթացքը, իր բանարվեստի պոետիկայով ու քննական հարցադրումներով դարձել ուղենիշ։ Սկսելով վերածնության մեղեդիներից և թռիչք կատարելով՝ բերել է ժամանակի շունչը նոր թափով ու խիզախումներով, էականի ընդգծման բացառիկ տաղանդով, նրբագծի ու նրբերանգի փորձընկալմամբ, բանաստեղծական պատկերավորման նոր արտահայտչաձևերով ու գրական նոր ժանրերի ստեղծման խրախճանքով։

Խոհագրության մեջ ազատ ոճով ընտրողաբար մեջբերել ենք գալիքի թեման անվերջ շիկացնող բանաստեղծի ստեղծագործություններից տողեր ու պատկերներ, որոնք դարձել են յուրօրինակ խարիսխ՝ Չարենցի գրական վաստակի մեր ընդհանուր բնութագրման համար։

ԴԵՐԱՆՑ Մարգարիտ
ԱՄՆ-ի ՀԳՄ վարչության քարտուղար, արձակագիր (ԱՄՆ)
էլ. փոստ՝ margaritderanc@gmail.com

ՄԻՍՏԻԿ ԼԻՐԻԿԱ

Գաղտնիք չէ, որ հենց սիրո գեղագիտական դրսևորման մեջ են նաև արտացոլվում Եղիշե Չարենց պոետի հանճարեղ յուրահատկությունն ու հուժկու անհատականությունը:

Ուսումնասիրելով սիրո դրսևորումների առավելականությունը չարենցյան պոեզիայում՝ հայտնաբերում ենք այն մերթ երազային պլատոնական, մերթ դասական, վայելուչ, մերթ կրքոտ ու մարմնական, մերթ ինքնահոշոտման չափ խանդաբորբոք, մերթ սիրո ու ատելության բախում, որ հստակորեն վերածվում է «անկումային սարսափի»:

Այս համատեքստում «Կարմրազգեստ դահիճը» բանաստեղծությունը տարբերվող ստեղծագործություն է չարենցյան սիրո խարխափումների պատկերասրահում: Ոճական առումով այն միստիկ լիրիկա է: Սա ֆունդամենտալ գործ է մեր տխրությունը կորցրած պատրանքի համար: Այն նաև խաչմերուկային գործ է: Սյուժետային ձևույթի բանաստեղծություն է, որտեղ մեծ պոետը դրամատիկ իրավիճակ է ստեղծում, հանգույցը լուծում դաժանորեն: Այս բանաստեղծության մեջ բախվում են իրար հետ հավերժական կանացին ու ժամանակի վայրենությունը՝ մերկապարանոց հույզերով: Երազի կինը գիտի, որ իր մահվան գնով ինքը կհաղթի՝ մղելով տղամարդուն, տվյալ դեպքում՝ կարմրազգեստ վայրենուն, դեպի ապաշխարություն: Բանաստեղծությունը սյուժետային լինելով պատմողական է, և պատմում է պոետի ու երազի կնոջ կյանքը, սերն ու կործանումը:

ՄԱՏԻԿՅԱՆ Հասմիկ
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների
կենտրոն (Հայաստան)
էլ. փոստ՝ hasvrej@mail.ru

ՕՐՈՐ ԲԱՌԱՆՎԱՆ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ Ե. ՉԱՐԵՆՑԻ ԲԱՆԱՐՎԵՍՏՈՒՄ

Եղիշե Չարենցի պոեզիան առատ է «օրոր» բառով, որը բանաստեղծական տարբեր միջավայրերում ունի իմաստային յուրօրինակ դրսևորում:

«Օրոր»-ը և նրանով կազմված օրորվել բայաձևը բանաստեղծի որոշ ստեղծագործություններում դառնում են բացող և փակող բառամիավորներ: Նշենք՝ «Ճամփին» բանաստեղծությունից մի հատված՝

Օրորվելով կառքն էր վազում սրընթաց
Դաշտի միջին ճանապարհով ցեխապատ:
Թոնն էր մաղում միապաղաղ, ցուրտ ու թաց:
Օրն էր մարում հիվանդոտ ու մեղմ, վհատ:
/ընդգծումները մերն են/:

Մեկ այլ բանատողում Չարենցը գրում է.

Հուզվում ու ծփում են օրերը,
Ինչպես իմ երգերը բոլոր,
Երբ քաղցր կարոտդ վառել է
Սրտիս մեջ նոր սեր ու օրոր:
/ընդգծումները մերն են/:

Վերը բերված օրինակում /հուզվում, ծփում/ բայերը՝ տարուբերվելու, մեղմելու իմաստային բովանդակությամբ, ստեղծում

են օրորի պատկեր՝ շարժման ու ռիթմի մեղմ խաղով, ներդաշնակությամբ:

Չարենցի պոեզիան կապույտ գունանվան դաշտում է մեծապես զարգանում, որ մաքրաբեր է, օրորուն, շարժուն, երերուն.

Կապույտ լճի վրա, բացերի մեջ պարապ,
Օրորվում է ահա մի սպիտակ կարապ:
Վարը, որպես երկինք, լիճն է ծփում օրոր,-
Վերը, որպես մի լիճ, կապույտ երկինքն է խոր
/ընդգծումները մերն են/:

Իմաստային առումով *օրորվում է, ծփում է* բայազույգը մի կողմից վարանքի մեջ լինելու, մյուս կողմից՝ մաքրվելու, մաքրությունից ծփալու խորհուրդ ունի:

«Ծփում են օրերը», «ծփում է օրոր» կապակցությունները, քննվող ստեղծագործություններում առանցքային լինելով, ապահովում են ռիթմայնություն:

Հր.Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» օրօր-ը ներկայացվում է որպես՝ մոր երգը մանկիկին քնեցնելու համար, որից օրօրել կամ որորել մանկիկին օրրանում շարժելով քնեցնել, կրկնված է պարզական օր՝ «շարժել» արմատից:

Ամփոփելով նշենք, որ «օրոր» բառի իմաստային դաշտը Չարենցի պոեզիայում առավել ամբողջական պատկերացնելու համար պետք է վերջինս դիտարկել հարևան բառերի համապատկերում, համատեքստի դաշտում: Չարենցի բանատողը շարժում ու էներգիա կրող է, մտքի շարժունությունը բնորոշ է հեղինակի լեզվամտածողությանը: